

հրամանի յափշտակել Կ. Պոլսոյ աթոռը (Պարաշաղէ, էջ 186), եթէ կարելի է հաւատ ընծայել հակառակորդ պատմագիրին խօսքերուն տառական ճշգրտութեանը:

### ԹԲ.

ԿԵՍԱՐԱՅԻ ՀԻՆԳԵՐՈՐԳ ԱՆԳԱՄ ՊԱՏՐԻԱՐԿ  
ԵՒ

ԼԵՀԱՀԱՅՈՅ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՄԷՋ ԻՐ  
ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ  
(1626 – 1629)

Պրիզոր Կեսարացիի այս հինգերորդ անգամի պատրիարքութեան մասին դարձեալ միայն Պարանաղցին է որ մասնակի ծանօթութիւններ կուտայ, իր ծանօթ տըրամադրութիւնը խառնելով գործին:

Իբր թէ անիկա գլաւած է 1628ին իր աջակցութիւնը այն Հայերուն՝ որոնք կը քանային Կէօմրիւկի Ս. Նիկողայոս եկեղեցին (Էտիրնէ Պարուի մօտ, այսօր Քէֆէլի Ճամի) թուրքերու ձեռքէն ազատել: Պարանաղցի կ'ըսէ թէ անիկա սատած և նախատած է և չէ թողած որ անոնք ղիմումներ ընեն:

Իրեն պէս Յովհաննէս Խուլ ալ անփոյթ եղած էր այս մասին, վասնզի երկուքն ալ